

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ**

**ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵԻ  
ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԱՎԱԳ ՄԱՍՆԱԳԵՏ**

<b>1.Ընդհանուր դրույթներ</b>
<p><b>1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը</b> Կադաստրի կոմիտեի կադաստրային գնահատման և շուկայի վերլուծության վարչության (այսուհետ՝ Վարչություն) շուկայի վերլուծության բաժնի (այսուհետ՝ Բաժնի) ավագ մասնագետ (ծածկագիրը՝ 61-25.7-Մ4-2)</p> <p><b>1.2. Ենթակա և հաշվետու է</b> Ավագ մասնագետը ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:</p> <p><b>1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները</b> Ավագ մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի գլխավոր մասնագետներից մեկը կամ մասնագետներից մեկը:</p> <p><b>1.4. Աշխատավայրը</b> Հայաստան, ք.Երևան, Կենտրոն վարչական շրջան, Արշակունյաց 7</p>
<b>2.Պաշտոնի բնութագիր</b>
<p><b>2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները</b></p> <ol style="list-style-type: none"><li>մասնակցում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի անշարժ գույքի հետ կապված ծառայությունների մատուցման և գնահատման աշխատանքային խմբի ընթացիկ աշխատանքներին.</li><li>իրականացնում է Երևան քաղաքի վարչական շրջանների նորակառույց բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի և վարձակալության առաջարկվող տվյալների բազայի մուտքագրում.</li><li>աջակցում է անշարժ գույքի գործակալների գործունեության կարգավորման և զարգացման աշխատանքներին.</li><li>աջակցում է անշարժ գույքի շուկայի զարգացման աջակցման, վերլուծության համար անհրաժեշտ աշխատանքներին.</li><li>մասնակցում է գնահատման ոլորտի բարելավմանն ու ընդլայնմանն ուղղած աշխատանքներին.</li></ol> <p><b>Իրավունքները՝</b></p> <ul style="list-style-type: none"><li>ստանալու համապատասխան մարմիններից տեղեկատվություն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի անշարժ գույքի հետ կապված ծառայությունների մատուցման և գնահատման աշխատանքային խմբի ընթացիկ աշխատանքների իրականացման նպատակով.</li><li>տեղեկատվական կայքերից ստանալու լրացուցիչ տեղեկություններ առաջարկվող տվյալների վերաբերյալ նորակառույց բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի և վարձակալության առաջարկվող տվյալների բազայի ստեղծման նպատակով.</li><li>ստանալու համապատասխան մարմիններից տեղեկատվություն անշարժ գույքի գործակալների գործունեության կարգավորման և զարգացման աշխատանքների իրականացման նպատակով.</li><li>Բաժնի աշխատակիցներից ստանալու համապատասխան տեղեկատվություն անշարժ գույքի համակարգված դիտարկումների ոլորտին վերաբերող գրություններին պատասխանելու նպատակով.</li><li>ստանալու համապատասխան մարմիններից տեղեկատվություն շուկայի զարգացման, աջակցման, վերլուծության համար անհրաժեշտ աշխատանքների իրականացման նպատակով.</li></ul>

- ստանալու համապատասխան մարմիններից տեղեկատվություն անշարժ գույքի գնահատման գործունեության վերաբերյալ փաստաթղթերի, արձանագրությունների, հրամանների նախագծերի, ծանուցումների պատրաստման նպատակով.
- ստանալու համապատասխան նյութեր գնահատման ոլորտի բարելավմանը և ընդլայնմանն ուղղած աշխատանքների իրականացման նպատակով.

**Պարտականությունները՝**

- պատասխանել ընթացիկ գրություններին և հանդես գալ համապատասխան առաջարկություններով.
- իրականացնել Երևան քաղաքի վարչական շրջանների նորակառույց բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի և վարձակալության առաջարկվող տվյալների բազայի հավաքագրում և առաջարկի բազայի կազմման աշխատանքներ SPSS ծրագրում.
- ուսումնասիրել միջազգային փորձը.
- Հավաքագրել շուկայի զարգացման աջակցման վերլուծության համար անհրաժեշտ տվյալներ.
- պատրաստել անշարժ գույքի գնահատման գործունեության վերաբերյալ փաստաթղթեր, արձանագրություններ, հրամանների նախագծեր, ծանուցումներ.
- մշակել որակավորված գնահատողների դաշտի կարգավորման հայեցակարգը.
- Բաժնի պետի հանձնարարությամբ իրականացնել անշարժ գույքի գնահատման գործունեության վերաբերյալ փաստաթղթերի, արձանագրությունների, հրամանների նախագծերի, ծանուցումների պատրաստում.
- Բաժնի պետի հանձնարարությամբ նախապատրաստել անշարժ գույքի համակարգված դիտարկումների ոլորտին վերաբերող գրություններ.

**3. Պաշտոնին ներկայացվող պահանջներ**

**3.1. Կրթություն, որակավորման աստիճանը**

Բարձրագույն կրթություն.

**3.2. Մասնագիտական գիտելիքները**

Ունի գործառնությունների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

**3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձառություն**

Հանրային ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ կամ մեկ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ մաթեմատիկայի կամ ճարտարագիտության բնագավառում՝ մեկ տարվա աշխատանքային ստաժ:

**3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ**

**Ընդհանրական կոմպետենցիաներ՝**

1. Խնդրի լուծում
2. Հաշվետվությունների մշակում
3. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
4. Բարեվարքություն

**Ընտրանքային կոմպետենցիաներ՝**

1. Բողոքների բավարարում
2. Ժամանակի կառավարում
3. Փաստաթղթերի նախապատրաստում

**4. Կազմակերպական շրջանակ**

**4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը**

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության վերջնարդյունքին նպաստող միջանկյալ արդյունքի ստեղծման համար:

**4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները**

Կայացնում է որոշումներ կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված՝ մասնագիտական գործունեության վերջնարդյունքին նպաստող միջանկյալ արդյունքի ստեղծման շրջանակներում:

**4.3. Գործունեության ազդեցությունը**

Ունի ազդեցություն մասնագիտական աշխատանքների ապահովման և որոշակի

մասնագիտական գործառույթների իրականացման շրջանակներում:

#### **4.4. Շփումները և ներկայացուցչությունը**

Իր իրավասության շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի կառուցվածքային այլ ստորաբաժանումների, ինչպես նաև համապատասխան մարմնից դուրս մասնագիտական հարցերով շփվում է այլ մարմինների և ներկայացուցիչների հետ:

#### **4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը**

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրների լուծման մասով տալիս է մասնագիտական առաջարկություն: